*թիւններ հաւաքելու, որոց արգասիքը երևում է վերև ցոյց տուած մուտքի մէջ։*

*Մոզդոկեցի վաճառական Պ. Գալուստ Քօլուբաշեանցը նուիրել է իւր մի կրպակի տարվայ վարձը 120 րուբ.*

Մոզդոկայ Հայոց Նախական — Հոգևոր — Ընդհանուր Դպրոցի Հոգաբարձութեան անդամք։

Աւետ Տէր-Յովհաննէս Խուրշուդեանց
Յարութիւն Գանջումեանց
Մակար Ուրուխանեանց

(Հաստատուած է Գ. Գ. Շմիտեանցի Թումանեանցի ...ցոյց էն)։

28 Յուլիսի 1872 Թ.
ի Մոզդոկ։

---

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ Ի ԳԱՐԱ-ԹԱՂ.

---

*Կյուսամք թէ Պարսից բարեխնամ Կ. Կառավարութեան ուշադրութիւնը չը վրիպիր հետևեալէն, և գուցէ արդէն տընօրինած լինի զարժանն՝ յիշատակեալ ոճրագործաց անների բարբարոսութիւնքը ի քննին առնուլ և ըստ օրինաց և ըստ արդարութեան պատժել զչարագործսն։*

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

*Այժմ ընականարար խօսելով՝ արեգական մուտք և ելքը օրեր են կազմում և ամիսներ, որով տարին է բաղկանում, որ մարդկութեան սահուն կենաց սահմանը անխարդախ և հաւասարապէս կը չափէ. այլ աւաղ զի ըստ արդեանցն բոլորովին տարբեր և անհաւասար. և ով կ՚յանդգնի, ոչ, ասել, որովհետև ամենայն տեղ անվարագոյր կը լուսաբանուի մի և նոյն շրջանի մէջ զանազան ազգաց ազգի ազգի յաջող և ձախող, տրտմաուխ և խնդաուխ իրականութիւնները։*

*Քանզի Բրուսիա ի թագաւորութենէ ի կայսերական Գահն ամբառնալու բաղդը հզօրեղապէս յափշտակելով՝ լուսաւորութեան և յառաջադիմութեան գաղափարներ կ՚ձուլէ Եւրոպիոյ, նորա ակնածութիւնը ժառանգելով. Անգղիա և Ամերիկա մարդկութեան կրթութեան գերահռչակ և գերահանճար արհեստից կեդրոնատեղի են հանդիսանում մի և նոյն շրջանի մէջ՝ ի պարծանս ազգին իւրեանց, նախանձելի տեսարան ներկայացնելով շրջակայից. ով երջանիկ շրջանիս, այժմ շրջան ցանկալի, բայց Հայոց համար չէ այս նախանձելի շրջանը. քանզի թէպէտ մի և նոյն շրջանի մէջ նորին Վեհ. Օծութիւնն արժանաժառանգ Գահակալն Լուսաւորչեան սուրբ Աթոռոյ և անձնազոհ հովուապետն ամենայն Հայոց մեծ հոգատարութեամբ ճգնեցաւ և կ՚ճգնի նոյն շրջանի յառաջադիմութեան և լուսաւորութեան ճառագայթները Հայոց մութ հօրիզոնի վերայ փայլեցնել, կարևոր և կարելի եղած տեղերը ուսումնարաններ սահմանելով և զանազան գեղեցիկ կանոններով զնոյնս բարեկարգելով, քաջ գիտելով՝ թէ անզի պիտի բղխին ազգիս լրութեան բարոյական և յառաջադիմական կենաց փրկութեան զովարար աղբիւրները, յիրաւի քաջ զգաց այս ամենակարևոր խնդիրը, զոր կատարելագործելու համար, զանազան բարեկարգութեանց զկնի, ազգային առատ նուիրատուութեամբը հիմնեց գերագահ մայր Աթոռումն հռչակաւոր ուսումնարան, որ իւր արտաքին և ներքին շքեղութեամբը և վայելուչ դըրութեամբը ընդհանուր ազգի Հայոց ուսումնարանների թուումը եզականութեան արտօնութիւնը իրաւամբ կ՚սեփհականէ ինքեան, որ ամենակարեւորն իսկ էր, յորմէ՝ եթէ ազգային ձեռնտուութիւնը օգնէ, անշուշտ պիտի յառաջ գան ազգասէր, բանիբուն, լեզուագէտ և ազգի արդի դրութեան և վիճակի արժանավայել հոգևորական անձինք ի սփոփանս մխիթարութեան ազգին մերոյ։*

*Թէպէտ Հայք ըստ մեծի մասին կ՚վայելեն ազատութիւն և թագաւորական օրինաց արդարութիւնը, բայց ոչ բոլորովին իսկ, քանզի Պարսկաստանի և Տաճկաստանի շատ գիւղօրէից մէջ գրեթէ ստրկութեան անտանելի լծոյն տակը ծըռշուած են, ըստ որում քանի աւուրք առաջ կարդալով ազնիւ Մասիսի թերթերում մէջ Մշոյ վիճակի Սասունք և այլ գիւղօրէից թշուառ բնակչաց կարեկցելի և միանգամայն զզուելի հայրենասէր Հայ սրտից անտանելի դրութիւնն, խորին տրտմութիւնն չ՚կարողացայ բացամերժել իմ Հայոց ցաւոցն ցաւակից սրտէս, և մինչդեռ այս տրտմութեան մէջ խորասուզուած, Պարսկաստանն Տաճկաստանէն գերազանց կ՚համարէի տարաւիր Հայ վիճակաց դիտմամբ, ահա իմ Ղարատաղարնակ համազգի եղբարց նոր բռնաբարութեան լուրը կարեւէր Կ՚խոցէ իմ սիրտը, ըստ որում ինչպէս գրաւորապէս տեղեկացաւ Գեր. Առաջնորդ տեղւոյս. Ղարատաղ նահանգի Նմրատուլ գեղջ Հայ բնակիչքն անիրաւաբար այլազգեաց բարկութեան բաժակի մրուրը խմեցին. քանզի ըստ նախնի սովորութեան՝ նոյն նահանգի իշխող խաները ամարանոց երթալու առթիւ նախապէս իւրեանց կայքը կ՚ապահովեն Հայոց գիւղերումը. իւրեանց համազգիներէն կողոպտելու երկիւղիւը, թէպէտ ուրախութիւն. զի Հայերը իւրեանց գովանի մտերմութեամբը Պարսիկ մեծաւորաց վստահութիւնն և համակրութիւնն գրաւած են, աւելի քան զնոցա համազգիներն, բայց երանի թէ չ՚էր այսպէս, քանզի վնասն մեծ է օգտիցն. քանզի Ալի մուրատ խանն իւր տան կայքը և կարասիքը ի պահեստ տալով*

յիշեալ գեղջ բնակչացն՝ յամարանոց կմեկնի, թող նա մեկնի իւր ապահովութիւնն վայելելու. իսկ մեք մտադրութիւններս դարձնենք նոյն գեղջ տխուր տեսարանի վերայ որով նաև ականատես պիտի համարուենք Ջինկիզ խանի, Լանկթամուրի և Հագարացւոց և այլ բռնաւորաց գերութեան և աւարառութեան, որոց ժամանակ աւաղելի և անտանելի վիճակում՝ իբրև հոգեվարք կհեծեր Հայաստանն։

Քանզի Բաղը խանն և 1) Ամիրզատա խանն 200 հեծելովք ընդ երեկս շրջապատելով նոյն գիւղն բռնել կտայ քահանայն և բնակչաց մի քանի երևելիքն յանդիմանական խօսքերով կպահանջեն Ալի մուրատ խանի կայքն, իսկ Հայերն երդմամբ և համոզանօք կուզեն հաւանացնել, թէ Ալի մուրատ խանի կայքն չունիմք մեք բնաւ, դեռ (բնաւ) բառն բոլորովին բերն էն չարտաբերած մորակի և անգութ մահակների հարուածներն անընդմիջապէս կտեղան ողորմելեաց վերայ առանց նայելոյ աչքին և երեսին, սաստիկ գանակոծելէն քահանայն և ժողովուրդը կարևէր վիրաւորելէն ետքը, նոցա բերնին պնդութենէ կհարկադրուին կողոպտել զգիւղն, վասն որոյ կհրամայեն հեծելոցն անխտրաբար հարկանել և կողոպտել զգիւղն, յորժէ թէպէտ ի մէջ գիշերի ոմանք ի լերինս հանդերձ ընտանեօք և ոմանք յապաստանարանս անտառի կապաւինեն, իսկ հեծեալքն գիւղը կողոպտելէն և քանի ինչ տուն հրդեհելէն ետքը՝ բազմութեամբ կդիմեն Եկեղեցին, կկոտրեն դուռն, կառնուն աւետարանը, խաչըն, միւռոնի շիշն լի միւռոնով, վարագոյր Տաճարին, շուրջառը, բուրվառն, սկին, ատենին, ճաշոցը և այլ մանրամասն սպասք Տաճարին. բոլորովին անգթութեամբ վարուելով, ծերոց, մանկանց և տղայոց գթաշարժ ձայնին չլսելով, և երբ մեկնել կաճապարեն քահանայն կխակենդան վիրաւորուած առաջ կդիմէ Եկեղեցական սպասքըն խնդրելու, այլ նոքա բոլորովին կմերժեն, յետոյ նորանցից մին 20 մանէթ ուզելով՝ կկամենայ եկեղեցւոյն սպասքն վերադարձնել, ըստ պատահման բարեբախտաբար կհանդիպի այն տեղ Ագուլեցի Աւետիս աղայն որից քահանայն 30 մանէթ առնելով կտայ պահանջողին, բայց ո՛չ բոլոր կայք եկեղեցւոյն՝ այլ միմիայն աւետարանը, ժամագիրքը և շարականը կտանայ խեղճ վիրաւորեալ քահանայն, հուսկ ամենայնի իւրեանց թշնամական և ծաղրական կրիցը մի փոքրիկ թէատրոն կուզեն ներկայացնել, քանզի աւետարանն յանձնելով քահանային կստիպեն կարդալ բարձրաձայն որոյ հանդիսատես էին ամեն հասակի բնակիչք գեղջ և անգութ հեծեալք և երբ քահանայն սկիզբն կառնէ ընթերցման՝ գաւազանի սաստիկ զանից հարուածներն շրջապատած բարբարոսներէն անխնայաբար կտեղան իւր գլխոյն վերայ, զայս պատճառ պատճառելով ''ո՛չ եթէ աւետարան կկարդաս դու, այլ զմեզ կհայհոյես թշնամաբար,, և այսպէսով իւրեանց անօրէն կիրքը յագեցնելով կմեկնին, քահանայն վիրաւոր դրութեան և ժողովուրդը սգոյ և տրտմութեան վիճակի մէջ թողլով։

Արդ կմնայ մեզ յուշադրութիւններս դարձնել մեր Գեր. Առաջնորդի հսկողութեանն, վասն զի այս տրտմառիթ լրողութեան բողոքագիրն ստանալուն պէս կուրծքն վառեցաւ հայրենասիրութեան ներքին բոցովը, զոր բազմիցս փայլած տեսածեմք զանազան հրողութեանց մէջ, քանզի անմիջապէս այն բողոքագիրն Գաղղիերէն և Պարսկերէն թարգմանել տալով իւր առանձին յայտագրովն Քրիստոնեայ հիւպատոսաց յուշագրութեանն կյանձնէ այսինքն Ռուսաց, Անգղիացւոց, Գաղղիացւոց և Պարսկերենը Պարսից կառավարչացն, միանգամայն յայտնելով թէ թէպէտ վիշտը և զրկանքը բռնաբարութեամբ կրեցին այն թշուառ Հայազգիքն, իսկ կրօնից և քրիստոնէական հաւատոյ անարգութիւնքն ևս միթէ՞ նոցա միայն պիտի վերաբերէ, ոչ բնաւ, այլ համայն քրիստոնէից մանաւանդ ձեզ, տէր Հիւպատոս, որ պաշտպան էք քրիստոնէական Հաւատոյ Պարսկական բռնութեանց դէմ.

Գործոյ ընթացից իրականութեան որպիսութիւնն խոստանալով գրել ձեզ յարգո՛յ խմբագրութեանդ. այս մեր սիրելի ազգի լրութեան յուշագրութեան արժանաւոր խնդիրը ազգասիրաբար ընդունելով՝ ասպնջականել կխնդրեմ ազգօգուտ Արարատիդ էջերումը։

Գրիգոր Յովհաննէսեան

Ի 22 Յուլիսի 1872 ամի
Ի Դաւրէժ.

## ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ ԵՒ ՊԵՍՍԱՐԱԲԻՈՅ ՔԱՆԻ ՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԵԱՆՑ.

(Շարունակութիւն).

Ազքիրմանի Դպրոցը իմ գիտցածովս՝ տասն և հինգ տարիէն աւելի է որ կայ ու կգտնուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ իւր ճակատը կրելով մեծատառ նշանակ մի այսպիսի արձանագրութեամբ ''Ժողովրդական Դպրոց Լուսաւորչական Հայոց,,. Կտեսնէք որ ժողովրդական անունը կայ վերան. բայց ժողովուրդ ասելով պէտք չէ հասկանալ քաղաքիս Հայ հասարակութիւնը որ դպրոցի հաշիւներուն ամենևին չխառնուիր ու տեղեկութիւն մի չունի թէ ինչով կկառավարվի, հապա միայն Ա. ազգատոհմը, կամ լաւ ևս ասել, այդ բազմաթիւ գերդաստանին մէկ սակաւագիւտ կատարելութեանց տէր անձը, որ իրեն հայրաւանդ պարտք մի համարած է ի սկզբանէ

(*) Ղարադաղու (Սուլթէն)՝ նահանգապետն որդին է Ամիրզատայն։